

ՔԱՎԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուրիտիոն համար
 Տարեկան 10 Ձր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՅԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չնկ տրուի
 —)(—
 Իրանացեան տղոց 20 սակ-
 րիւր է. երեքին աւելի աւ-
 ցաւնեալու համար 20 Օլօ
 գեղ կըլլայ :

ՇԱՐՇՈՒՄ

Նախկ եւ դրան դրկի
 Խմբագրութեան հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԻ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ.

ԱԶԳ. ՅԵՂԱՓՈՒՍԻԹԵԱՆ

ՈՉ ԱՅՆՔԱՆ ՀԱՄԱԿԻՐ . . .

Հաճեցէք կարգալ մեր այսօր-
 րուան Փ. Պոլսի թղթակցութիւնը:
 Հին պիտի հանդիպիք այն տո-
 ղերուն որոնք մեր ներկայ յոգ-
 ուածին վերնագիրը կը կազմեն:
 Այն դաստիարակը որ պիտի
 կռուի Փ. Պոլսի ազգային ման-
 կտի կրթելու հայրենիքի և ազ-
 գին սիրոյ սկզբունքներուն մէջ,
 պէտք չէ եղեր որ այնքան հա-
 մակիր ըլլայ ազգ. յեղափոխու-
 թեան. ինչ որ տարբեր բառե-
 րով կը նշանակէ թէ պէտք է ե-
 դեր առէ զայն, խոչնդոտ կանգ-
 նի անոր:
 Ինչ գրութիւններ այնքան վատ
 տպագրութիւն թողած են վրաս
 որքան այդ սողերուն ընթեր-
 ցումը: Այդ տողերը մեր թըլ-
 թակցին անձնական գաղափարը
 չեն կազմեր, այլ պարզապէս
 արձագանգն են դաստիարակի մը,
 քիչ շատ ամէն կողմեր տարած-
 ուած, և որ, իրեն յեղափոխու-
 թեան երգուեալ թշնամի, անոր
 քայքայումը աւելի հիմնական ը-
 նելու համար, հիմակ ալ հիմէն
 սկսել կուզէ, և մանկութիւնը
 ձեռք կառնէ . . . և կամ միա-
 մտաբար կը գործէ, ինչ որ յան-
 ցանքը մեղմացնելով հանգեծ՝
 նոյնքան փաստակար ըլլալէ չդադ-
 րիր:
 Կըմբռնեմ որ հայ մը դժգոհ
 ըլլայ կուսակցութեան մը, քըն-
 նադատէ անոր գործերը, լուսա-
 գոյնը պահանջէ, նոյն իսկ բու-
 զութ խնդրելով այլեայլ բարե-
 քուսներու ներմուծումը ազգային
 դատը վարելու ահագին ձեռնար-
 կին մէջ:
 Բայց պահանջել դաստիարակէ
 մը որ իր շրթերէն կախուած
 մանկութեան սրտին մէջէն ազ-
 գային ամենէն սուրբ իտէալը
 արմատախիւ ընէ, որ տղաքը յա-
 լիսենականապէս ստորակ կեանքի
 մը համակերպեցնելու աշխատի,
 հայրենիքը ուրացնել տայ իր
 արիւնտ և խոցուած վիճակին
 մէջ. տգնիլ, որ հայ պատանին
 եղածներուն չմտածէ և ո՛չ ալ

ըլլալիքը փոյթը ընէ, երբե՛ք
 չզգայ իր երակներուն մէջ այն
 վեհ սարսուռը որ կը մղէ գե-
 րագոյն անձնութիւններու և
 որ այնքան յարգի կըլլայ որքան
 որ զարգացած և գիտակից էակին
 մէջ ուրճանայ . . . ահա՛ ինչ որ
 տխուր, շատ ախուր է:
 Ինչ համոզուած ըլլալու ենք
 թէ որքան ալ մեր դպրոցներուն
 ուժ անք, որքան ալ ընկերու-
 թիւներ, լսարաններ հաստա-
 տենք, որքան ալ բարեկարգ և
 պայծառ պահենք մեր եկեղեցի-
 ները, արտասահմանի հայու-
 թիւնը եթէ յեղափոխական գա-
 ղափարէն զրկուի, որ մը կը փճա-
 նայ:
 Տիրող տարրերուն հետ ձու-
 ման հոսանքը այնքան սաստիկ
 է, որ մեր բոլոր ջանքերը չպի-
 տի կրնան դէմ տալ անոնց եր-
 կար ժամանակ, եթէ Մայր Հայ-
 րենիքի գաղափարը մեզ զօրա-
 վիչ չըլլայ:
 Մեր բոլոր ջանքերուն բուն
 նպատակը՝ հայութիւնը իր այս
 ստորակ վիճակին մէջ յաւիտե-
 նականապէս անշէջ պահելը չէ
 արտասահմանի մէջ. առիկա յի-
 մար և անիրականալի նպատակ
 մը պիտի ըլլար: Մեր ջանքերը
 կը ձգտին հայութիւնը վառ պա-
 հել մինչև այն օրը ուր հայրե-
 նիքը փրկուելով մեզ իր գոյնին
 մէջ ընդունի և կամ հեռուէն
 հակէ մեր վրայ: Հայրենիքի
 փրկութեան թուականը որքան
 իսկ ուշանայ փաստ մը չունի. ու-
 ըրովհետեւ իտէալը կը բաւէ մեզ
 ամենքս ալ միացնելու, և մեզմէ
 կազմելու միակուր մարմին մը
 որ նոյն ճամբան, կեանքի ճամ-
 բան կը քայլէ: Ազգ. իտէալը մի-
 այն յեղափոխութեամբ կրնայ ի-
 րականանալ. ով որ անոր համա-
 կիր չէ՝ կը նշանակէ թէ հայու-
 թեան փճացման կուսակից է. և
 մեր ազգային ճամբայ մը բռն-
 նել կուզէ որ մերը չէ, որ փճաց-
 ման կը տանի . . .
 Այն բոլոր հաստատութիւննե-
 րը որոնց ուժ կուտանք ազգային
 գոյութեան սիրոյն համար,
 պէտք է վերէն վար յեղափոխու-

թեան գաղափարին կրակէ շուն-
 չովը կենդանանան: Եթէ այդ-
 շունը պակսի մեր դպրոցէն,
 մեր եկեղեցիէն, գիտցէք որ այդ
 դպրոցը հայու դպրոց չէ, այդ
 եկեղեցին՝ հայկական եկեղեցի
 չէ. որովհետեւ ազգային գոյու-
 թեան ազգակները չպիտի կրնան
 ըլլալ, ու իրենց ամբողջ սրբու-
 թիւնը կորսնցուցած են:
 Երբեք, ի սէր ազգային գոյու-
 թեան, երբեք չպահանջենք որ
 մեր կրթիչները, նոյն իսկ մեր
 եկեղեցականները անհամակիր
 ըլլան յեղափոխութեան: Ամն-
 նէն անխորհուրդ, ամենէն ազ-
 գափաստ բանը կըլլայ ասիկայ. եւ
 շատ աւելի օգտակար է համեստ
 այլ «հայու» դպրոց մը ունենալը
 և խոնարհ մատուց մը՝ ուր Հա-
 յաստանէն աւետիս բերող պան-
 դուխտ քահանային մրմունջները
 կը լսուին, քան ուղորական չոր
 ուսմունքներով խտացած դպրոց
 մը որ Հայրենիքը կուրանայ, ե-
 կեղեցի մը՝ որ ստրկութիւն կը
 քարոզէ:
 ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 19 Օգոստ.

Յեղափոխականի մը խոստովանա-
 քը. — Նոր առաջնորդն եւ նրա ա-
 ռաջին գործը. — Հոստի խնդիր:
 —
 Հայ Դրէյֆուսի մեղադրեցնելից
 Ռաֆայէլ Մովսիսեանց, նախկին ու-
 սուցիչ, նախկին յեղափոխական
 (կարծես յեղափոխութիւն էլ պաշ-
 տօն լինէր, որ մարդ կարողանայ
 նախկին մակդիրը կրել . . .) այժմս
 դատարկապարտ, որ երբեմն ազրուկի
 նման ապրում էր յեղափոխութիւնը
 շահու ապարէզ արած, հասարակու-
 թեան մէջ յայտարարում է.
 —Որ եւ է կուսակցութեան չեմ
 պատկանում, յեղափոխութիւնից հը-
 րածարկեցի:
 Բանից գուրս է գալիս, որ մտերս
 արտաքովի է շնչակեան կուսակցու-
 թիւնից, եւ որպէս զի նոր վարձվող
 սեսուէ Պ. Ռաշմաջեանի վարկը կա-
 րողանայ գցել և կասկածներ հրա-
 լիրել նրա վրա, այս ստոր միջոցին
 է դիմել—հասարակութեան ամէն խա-
 ւերում մուտ գործելով ասում է:
 —Ռաշմաջեան Գաշակցական է,
 անցեալ տարվայ արշաւանքին է մաս-

նակցել. կարող է ձերբակալվել և
 դրանով փասել կրթական գործին,
 եւ այլն:
 Ահա այս երկու արարածները՝ Սու-
 սանեանց և Մովսիսեանց, իրանց
 հացի խնդրի համար դիմում են ամե-
 նացած միջոցները և ստորնանում են
 մասնութիւն անելու աստիճան:
 Մինչդեռ յայտնի է որ Պ. Ռաշ-
 մաջեան, երբեք չէ մասնակցել որեւէ
 յեղափոխական շարժման եւ արշա-
 ւանքի միջոցում գտնվում էր Երեւա-
 նում, եւ այժմ էլ ուսուսկան կանո-
 նաւոր անցագրով ամսի 18ին ճանա-
 պարկվելու է դէպի Թաւրիզ:
 Միջոց Աստուր, Սուսանեանց և
 Մովսիսեանց ընկերութիւնը տես-
 նենք ի՞նչ օրիններ են հանելու. եւ
 այդ օրինները ի՞նչ հետեւանքներ են
 ունենալու:
 . . .
 Թէհրանի նախկին առաջնորդը
 վերջերս եպիսկոպոսանալով Ատրպա-
 տականի թեմի առաջնորդ կարգվեց
 կաթողիկոսի կողմից, և նախկին
 փոխ առաջնորդ Յովսէփ Վ. Սարաճ-
 եան նոյնպէս եպիսկոպոսանալով
 ընտրվեց Ամերիկայի առաջնորդ:
 Նախկին առաջնորդի եւ նրա գոր-
 ծերի մասին չենք ուզում այժմս
 խօսել, իրա կարգին առիթ կուրե-
 նանք գրելու, միայն ուզում եմ մի
 քանի խօսք ասել մեր ներկայ առաջ-
 նորդ Սահակ եպիսկոպոս Այվատեանի
 նոր գործունէութեան մասին:
 Սահակ եպիսկոպոս Թաւրիզ հաս-
 նելուց՝ իրա առաջին գործը եղաւ
 զբաղվել կրթական—Սուսանեանց—
 խնդրով, եւ, պէտք է խոստովա-
 նած, շատ թոյլ վարվեց, կարծես
 ուզում էր երկու հակադրող կողմն
 էլ սիրաշահել, մի կերպով եւայ
 գնալ, առաջին քայլում թշնամիներ
 չը շահելու միտումով:
 Սակայն գործը պահանջում էր
 կարուկ և վճռական որոշում. ճըշ-
 մարտութիւնը ակնյայտնի երեւում
 էր, դէս ու դէն թէքվիլը աւելորդ էր:
 Սրբազանը խնդրի միջոց ինքնի-
 րան գուրս գցելու, մի կերպով պա-
 տասխանատու չը լինելու համար,
 հեռագրում է կաթողիկոսին եւ Ռաշ-
 մաջեանի տեսուչ ընտրվելու մասին
 որ եւ է արգելք գոյութիւն ունենալ
 կամ շունենալն է հարցնում (°):
 Սրբազանի այս դիմումը բոլորովին
 աւելորդ եւ անպատշաճ էր, իրա
 ձեռնահաստութիւնից կախված մի գոր-
 ծում, տեղական հանգամանք ունե-
 ցող մի խնդրում, այսքան թոյլ եւ
 անորոշ մի ընթացքի հետեւելը, նրա
 թոյլ բնաւորութիւնն է մատնում,
 որը այդ ընթացքով իր նախորդի
 չափ եւ, թերեւս աւելի փաստակար,

կարող է դառնալ . . . Կրթական այս առաջին խնդիրը կարծես մի փորձաքար եղաւ Սրբազանի բնաւորութեան մի կողմը ցոյց տալու :

Մենք շատ յոյս ծնենք իրաւորիչ ազնիւ բնաւորութեանց վրա . մաղթում ենք , որ իրա այս առաջին փորձից — թուրքիստից — խրատով լով , ապագայում հետեւի աւելի որոշ եւ աւելի վճռական քայլեր անելու եւ թաւրիցիներին օգտակար լինելու :

Հոսնոսները թաւրիցու՞մ բաւական թիւ են կազմում եւ մեծ դեր խաղում հասարակական կեանքում : Գրեթէ ամենքն էլ լաւ գործեր եւ ապրուստի միջոցներ ունեն . վաճառական , երկու բժիշկ , ուսուցիչ , կառավարական պաշտօնեայ , արհեստաւոր , եւ այլն :

Մենք թաւրիցիներն իրոք աչքով ենք նայում առհասարակ օտարների վրա , մասնաւորապէս հոսնոսների : Անցեալում գտնվել են թաւրիցիներ , որոնք կամեցել են հեռացնել հոսնոսներին ազգային գործերից , նրանց օտար նկատելով . . . , եւ դեռ այսօր էլ շատերի մէջ տիրում է նոյն արտառոց գաղափարը :

Արդարեւ հոսնոսները , ի բաց առեալ մի քանիսը , առ հասարակ օգտակար են իրանց ազգային գործունէութեամբ , դպրոցների , եկեղեցիների , գրադարանների , լրարանների հաստատութեան եւ բարեխաղութեան գործում մեծ տեղ են ցուցնել , սակայն հակառակ իրանց կատարած այս օգտակար դերին , վիշապ նկատվել են օտար , հոսնոս :

Իբր ապացոյց հետեւեալ դէպքը պատմելով վերջացնեմ գրելիքս :

Նշանաւոր հոսնոսներից Պոլսեցի Պ. Յովակիմ Ֆէնէրեանց , որը ամենամեծ դերը խաղացել է թաւրիցու ազգային-կրթական գործերում երեսուն տարիներից ի վեր , Ս. Աստուածածնի վերափոխման տօնի օրը , առաջնորդ Սրբազանը՝ իրա առաջին պատարագը մատուցանելիս , հրաւիրել էր Պ. Ֆէ-

նէրջեանցին կատարել սեղանի վրա սարկաւազի պաշտօն , որին քաջ տեղեակ էր այս վերջինը :

Այդպիսի կարեւոր եւ մեծ տօնի միջոցին , մանաւանդ նոր ընարված առաջնորդ Սրբազանի անդրանիկ Ս. Պատարագի արարողութեան ժամանակ՝ եկեղեցին զատարկ էր . . . , բացի մի քանի կիներից եկեղեցու՞մ ոչ ոք չկար :

Շատերին որ հարցրի իրանց եկեղեցու՞մ ներկայ չը լինելու պատճառը , ինձ պատասխանեցին անտարբերութեամբ :

—Որովհետեւ , Ֆէնէրջեանց սարկաւազութիւն էր անո՞ւմ . . . :

Շատ զարմանալի եւ ապշեցուցիչ թվաց ինձ այս տարօրինակ պատասխանը . մի հոսնոս շատ արժանաւոր կերպով սարկաւազութեան պաշտօնը վարելիս , առելի է դառնում իմաստուն կարծած աղետներին եւ իմաստակներին . . . : Երանի չէր , որ մենք մեր մէջ ունենայինք սարկաւազութեան յարմար , տեղեակ եւ արժանաւոր անձինք , ու այնուհետեւ թերեւս իրաւունք ունենայինք արձամարմանքով վերաբերվել դէպի հոսնոսը , դէպի օտար համարվածը . . . :

Ընթերցող հասարակութիւնը այս գրովածներում պարզօրէն նշմարում է եւ ուսումնասիրում թաւրիցիներին հոգեբանութիւնը . . . :

Մենք մեր յաջորդ յօդաւանդով կը վանանք հետզհետէ պարզել թաւրիցու հայրի բուն հոգեբանական հանգամանքները , նրանց լաւ կամ վատ կողմերը :

Ուրեմն յտեսութիւն :

Մ Ի Ր Չ Ա

Փ. Պոլիս , 14 Սեպտ.

Վերջապէս թաղական ժողովի ընտրութեան վաւերացումը եկաւ Ա. Պոլսէն : Արդէն առարկութիւնները տղայական էին : Ա. Պոլսի վարչութիւնը եւ առաջնորդական տեղապահը յանցաւոր են երկու երկար ամիսներ անխնայութեան մասնիկով կարեւոր կեղծոն մը : Տարակոյս չը կայ

թէ չարակամութիւն կայ գործին մէջ , եւ Փ. Պոլսեցին լաւ կընէ այսուհետեւ խզելով իր յարաբերութիւնները Ա. Պոլսի հետ : Ընտրութիւնք պէտք է վաւերացուին Պատրիարքարանէն : Նորընտիր Թաղական Խորհուրդը զժուար դեր մը ունի կատարելիք : Գառս մը կայ մէջ տեղ եւ իր գործը պիտի ըլլայ կանոնաւոր վիճակի մը վերածել դայն : Պարտքեր պիտի վճարէ , կալուածներ պիտի ազատէ , հաշիւներ պիտի քննէ , եւ ասոնց համար պէտք ունի զօրաւոր կամքի եւ յարատեւ աշխատութեան : Կը յուսանք թէ նորընտիր թաղական Խորհուրդը պիտի չը թերանայ իր պաշտօնին մէջ եւ արմատական բարեփոխումներ պիտի մտցնէ ազգային ամէն հաստատութեան մէջ , իր ջանքերը ուրախութեամբ պիտի արձանագրենք այս էջերու մէջ :

—Ազգային վարժարանները վերաբացուեցան բաւական կարեւոր փոփոխումներով : Մանկապարտէզի երկու վարժուհիները վերահաստատուեցան իրենց պաշտօններուն մէջ միաձայն հաւանութեամբ : Իրական վարժարանին երկու վարժուհիներն ալ փոխուեցան : Արարական վարժարանին պուլկար զաստատուն փոխուեցաւ , եւ շատերու վկայութեան համեմատ լաւազոյն ուսուցիչ մը բերուեցաւ : Երկու երկրորդական զաստատուները վերստին պաշտօնի կոչուեցան : Թէ արական եւ թէ իգական վարժարաններուն համար պէտք կայ երկու առաջնակարգ մանկավարժ զաստիարակներու եւ դիմումներ եղած են զանազան տեղեր : Բայց զրամական անձկութեանը եւ ժամանակի անպատեհութեանը արգելք կըլլան : Հոգաբարձութիւնը որ հիմա հինգ խորհրդական անդամներ ալ ունի , կաշխատի բարեկարգել զբարոցը , բայց , ինչ ինչ նկատուեալով , այնչափ ուշացուց որ շատ զժուարութիւն կը կրէ : Մանաւանդ տակաւին պահպանողական ոգին հեռացած չէ ըլլողովին : Դպրոցական ելեւմուտքը այնչափ խանգարուած է որ կարելի չէ կանոնաւոր ամսական-

ներ վճարել , վերջապէս կը փնտրուի աման զնով առաջնակարգ երկու մանկավարժ զաստիարակները , մին իգական վարժարանին համար , միւր՝ արականին , կարող , խելացի , համակրելի , ամէն տեսակ բարեմասնութիւններով օժտուած , նուիրուած ազգային մտղաչ սերունդին բարգաւաճումին , ազգային յեղափոխութեան ոչ այնչափ համակիր : Եթէ կը գտնուին այսպիսի զաստիարակներ եւ զաստիարակուհիներ , կրնան լաւ ասպարէզ գտնել Փ. Պոլսի մէջ :

Այս բոլոր վարանումներէն եւ կիսափտուր գործողութիւններէն այնպէս կենթադրեմ թէ այս տարի պիտի չը կրնանք արմատապէս փոխուած տեսնել մեր դպրոցները : Տղաութիւնը եւ հակառակութեան ոգին տակաւին շնչուած չեն : Բայց գործը սկսած է եւ պիտի վերջանայ : Զարգացած զաստիարակին կամքի ուժը , յարատեւութիւնը , շարժառիթներու մաքրութիւնը , միջոցներու օրինաւորութիւնը ազդեցին մինչեւ ինչ ամենէն տղէտներուն վրայ :

—Նորակազմ ընթերցարանի ընկերութիւնը կը յառաջդիմէ : Երկր գիշեր ստալին լարանը ունեցաւ որ յարգելի տեսնաքան մը խօսեցաւ զաստիարակութեան վրայ : Անդամներու թիւը հետզհետէ կուճանայ , բայց սկզբնական շատ ծանրեր կան եւ միջոցներու անբաւականութիւնը բաւական նեղութիւն կուտայ վարչութեան : Անշուշտ ասոր ալ վախճանը պիտի գայ :

Թղթակից

Պոլիս , 20 Սեպտ.

«Քուրիէ տէ Պալքանյի մէջ կը կարդանք»

Մեր հրապարակին , է կարելի է ըսել ամբողջ երկրին առեւտրական եւ քաղաքական դրութիւնը օրէ օր կը մթալանի , մէկ կողմէն վաճառականութեան եւ միւս կողմէն դրամի պակասութեան պատճառով : Ներքին վա-

ՎԱՐՊ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ (36)

Այդտեղ քննիչը հարցրեց .

—Սուլթանի կեանքի դէմ էլ դաւադրութիւն ունե՞ք :

—Առ այժմ ոչ , պատասխանեցի , բայց հետզհետէ բարձրանալու էինք , թէ մինչեւ ուր յայտնի չէ . . .

Նորից թաղաւորեց ճնշող լուրթիւնը . . . : Նազիմը ազդված էր : Նա դուրս գնաց . քննիչը , Մաքսիմովը , թարգմանը եւ քեաթիպը համեմատում էին իրանց գրութիւնները : Ես ծխում էի : Յանկարծ ներս եկաւ Նազիմը մի նամակ ձեռքին եւ գիմեց ինձ :

—Մուսիսյ Պատրիկով , ես ուզում եմ ձեզ մի նամակ տալ կարգալու , ուր ձեր մասին էլ է խօսվում . եւ ուր , ձեր ընկերները ձեզ այնքան կարեւորութիւն չեն տալիս համեմատելով մէկ վարչի հետ , որի յեղափոխական լինելը դուք ուրացաք : Միայն պատուաւոր խօսք տեւք որ այս նամակը չէք պատի :

Նազիմը այդ խորամանկ քայլով ուղեց իմ անձնասիրութեանը զիպչել եւ ինձ ընկերներս , դէմ գրգռել : Իսկապէս բաւական վիրաւորվեցի : Բայց չուտով ինձ զսպեցի եւ սկսեցի խորհել , ուղիղով պաղարկուեթիւնս ձեռք բերել : Այդ լուրթիւնը բաւական երկար տեւեց :

Նազիմը հարցրեց .

—Ինչո՞ւ էք լուր՞ :

—Որովհետեւ դուք պատուաւոր խօսք էք ուզում որ ես նամակը չը պատում . եթէ ես այդ խօսքը տամ , պարտաւոր եմ կատարել : Բայց կարող է նամակի բովանդակութիւնը այնպիսի լինի , որ ոչնչացնելու համար ես նոյն իսկ ձեզ աւածս պատուաւոր խօսքից անցնեմ , գործին օգտակար լինելու եւ մի կարեւոր փաստ ոչնչացնելու համար :

Վերջապէս ասացի .

—Այո , խօսք եմ աւալիս որ այդ նամակը չեմ պատի :

—Ես հաւատում եմ ձեզ , ասեց Նազիմը , եւ նամակը տեւց :

Ահա նամակի բովանդակութիւնը մօտաւորապէս .

Տրապիզոն , սեպտ.

Միտիւ Աւօ ,

«Պոլիս գալով իսկոյն մօտիկ բարեկամացիք Արփիարի հետ : Ան թիֆլիս էր , սենյակը է Գր. Արծրունու հետ . Արծրունին մեծ վստահութիւն ունի վրան , հազար բուպիլ տեւր է հարսնիքի պատրաստութեան համար : Հոս տեսնվեցանք , շատ լաւ տպաւորութիւն թողուց . անպատճառ լաւ բարեկամացիք . ասոր չեն հասներ ոչ իմանը . ոչ վարդ-Պատրիկեանը եւ ոչ Մ. բուն Պոլսեցի եւ յայտնի ուսելք մարդ ըլլալով , անոնցմէ շատ

ու շատ առաւել օգտակար կրնայ ըլլալ եւ այլն» :

Մար . . .

Այս կարեւոր կէտերն իմ միտքս մնացել : Նամակը զրված էր Տրապիզոնից : Գրողն էր Պ. Մարիմանը , որի վրա ինչպէս երեւում է Պ. Արփիար տպաւորութիւն էր թողել իր եզրխական ճարտաստութեամբ . մանաւանդ որ Արծրունին էլ վստահացել էր հազար բուպիլ տալու Արփիարին : Իսկ Արփիարը իրան բարձրացնելու համար աշխատել էր ուրիշներին նսեմացնել , մասամբ արդարացի պատճառաբանութիւններով , այսինքն այն վերեւ յիշած մարդկանց որոնց մէջ եւ ես ոչ տեղացի եւ յախուան լինեցներս :

Վերեւը ես յիշել էի որ Նազարէկը ուզում էր գալ Պոլիս եւ Մարիմանը Պոլսում անցած զարձածը չիմանալով , Մուրասի սովորական հասցէին գրել էր այդ նամակը որ Աւօին յանձնվի : Արփիարը ուրեմն յաջողել էր արդէն ընկերների մէջ վարկի անկման սերմերը գցել : Եթէ ձեռքակալութիւնները տեղի չունենային , եթէ Աւօն զար Պոլիս : ես էլ այնտեղ մնայի , Արփիարը պէտք է աշխատէր իմ եւ Աւօի յարաբերութիւնները լարել ու այդպէսով վրէժ լուծէր իմ նախորդներից եւ ինձնից , որովհետեւ մենք չէինք հաւատացել

Արփիարի անկեղծութեան եւ նրա անգոյ հանճարին :

Այդ նամակը նորից շնորհիս Արմենակի անցել էր Նազիմի ձեռքը : Թէպէտ նամակը այնպէս պարզ եւ բացայայտ զրվելու մէջ Արփիարը մեղաւոր չէր , այլ ինքը Մարիմանը , որ այդպիսի գործի մասին այդքան բաց ձեռով նամակներ էր գրում :

Արիւնս գրուիս թաւ . բաւական չէր որ ճշգրտում էր Մ. եւ ի. անունները , որ արդէն շատ վաղուց յայտնի էին թուրք կառավարութեանը , ինչպէս երեւում է Մամբրէի ձեռքով բայց եւ մեծ կասկածի էր ենթարկում Գր. Արծրունուն : Նամակը ես աւի : Եւ ինքս ինձ ժողովիով ասեցի :

—Ես ոչ գրողին եմ ճանաչում . եւ ոչ միւսներին : Նորից կրկնում եմ որ Արփիարի հետ ոչ մի կապ չեմ ունեցել . իմ կարծիքով Արփիարը Արծրունուց կարող էր միայն իր վրէթակցութիւնների վարձը նասնայի Արծրունին յեղափոխական չէ : Թիֆլիսում մէկին ճանաչում եմ , բայց տեղ , ուր տարբեր գէմքի նկարագրութիւն , որի հրաւերով ես եկել եմ այստեղ , բայց չգիտեմ Մ. իսկապէս անուն է թէ կեղծ , միայն ես այդ անունով եմ ճանաչում :

(Շարունակելի)

ճառակալութիւնը մեռած է և որովհետեւ զայն ապրեցնողը գըլխաւորաբար թուրք պաշտօնեան է որ ամիսներէ ի վեր ամսական ստացած չէ :

Անցեալ տարուան հետ բաղդատմամբ մաքսատան հասոյթները հարիւրին 30 նուազած են . և որովհետեւ գրամական պէտքը մեծ է և ամէն կարգի ծախքերու դէմ դնելու համար , այս պահուս , միայն մաքսային հասոյթները կան , կրնաք երեւակայել թէ պետական գանձը ինչ վիճակի մէջ կը գտնուի :

Իսկով քաղաքական հորիզոնին , ամպերը ամէն կողմէ կը մթաղին և ապագան ամէն ատեն անլի անստոյգ է . կարծես թէ երկիրը կառավարողները իրենց ձեռքէն եկածը կընեն ալ անլի վատթարացնելու համար զայն : Այսպէս , ամենուն միահամուռ կարծեք , թէ Քանտիաի վերջին խռովութիւնները այս սեպտեմբրիս թեւադրութիւններէ մտաւ են :

Անգլիացիք ծանուցած են իրենց անփոփոխելի պահանջումները . այսինքն , պաշտօնապետները , պիտի մտնեն և անոնց զէնքերուն յանձնումը , թուրք զինուորներուն կրէտէ հանացումը , և վերջապէս , յանցաւորներու յանձնումը :

Չորսրակալն ատեն մը կարգուեցաւ Քրմբութանի մէջ , և Մալթան անգլիացի ծովակալի մը գալուն կսպասուի . հասնելուն պէս գործադրութեանց պիտի ձեռնարկեն : Առ այժմ փախստականներու մասին վկայութիւններ քաղելով կը բաւականան , և յանցապարտութիւնները կը ճշգրտեն : Կը հաւատեն թէ Իսմայիլ պէյ ու եւրէմ փաշան ալ պիտի պատժուին : Այս պահուս Քանտիան պաշարուած է ցամաքի կողմէն՝ ապստամբներէ և անգլիական ուժերէ և ծովու կողմէ՝ մարտանաւներէ . այնպէս որ ամէն փախստան անհնարին է :

Թուրքերը ընդհանրապէս զայրացած են . բայց , ամենէն սաստիկ երկիւղները պատճառելու եղանակով զայրացած : Նախ՝ անթուրքներէ կը միւռնին , որովհետեւ ամիսներէ ի վեր , բարա մը չեն ստացած . և որովհետեւ վերջապէս ամէն օր միւսլիմաններուն անհետանալը կը տեսնեն երկաթի և կրակի միջոցաւ , ու իրենց մոլեռանդութիւնը կը զգածուի : Բայց որո՞ւ է յանցանքը եթէ ոչ կառավարութեան որ ամէն բան ըրաւ միւսլիմաններուն կրօնական կիրքերը գրգռելու համար :

Արդարեւ 20 տարիէ ի վեր երկրորդի հեռուած անձնական քաղաքականութեան շահուն համար , մոլեռանդութիւնը բան մը չանհողացաւ . քրիստոնեայ ժողովուրդներուն և անոնց իսլամ հայրենակիցներուն ատեւութիւնները արժարձելու համար :

Օմտուրմանի սպանութիւնները ուր առ նուազն 30,000 Տէրվիչներ շնչուած են . Սամարղանտի գըլխատուները և Քանտիաի ուրախ կոծութիւնը արդէն իրենց հակահարուածը ունեցած են ամենէն սղջամիտ և խաղաղ իսլամներուն մէջ . այսպէս որ մեծ երկիւղ կայ թէ մի գուցէ արեան և ջարդի փոթորիկով մը պայթի :

Իզմիրէն նոյն բանը կը գրեն . կողոպուտի յայտնի խօսքեր կըլլան հոն , և կողոպուտ ըսելով միանգամայն ջարդ պէտք է հասկընալ . երկուքն ալ զուգընթաց կը քայլեն :

Հոս , ստորին գասակարգը բնական բանի մը պէս կը խօսի այդ նիւթին վրայ : Պատուաւոր յոյն մը անցեալ օր կը հաւատաւէր թէ լսած է փայտահարի մը բացորոշ կերպով ըսելը թէ «ինչալլահ» քիչ ատենէն երջանկութիւն պիտի ունենայ քրիստոնէի զըլուինքը կարելու , ինչպէս հիմա փայտ կը կտրէր , և կը հաւատար թէ այդ բանը ընելու արտօնութիւնը բարձր տեղէ գալու չպիտի ուշանայ :

Ինչ որ լուրջ գիտողներու ուշը գրնւած է , սա է թէ Ատտուած չընէ եթէ շարժումը պայթի , «չաքքան» ալ մէջ պիտի խաղայ ֆէսին պէս , և գուցէ նոյն իսկ ֆէսէն առաջ :

Վիլհէլմը ընդունելու համար եղած պատրաստութիւնները անհուն են . դրամը շաւղթէն կը ծախուի . և ի՞նչ դրամ . . . այն՝ որով պաշտօնեայն պէտք է վճարուի , որքն ու այրին խնամուին : Արդէն 700,000 օսմ . ոսկի ծախսուած է կըսուի , և 2-300,000 ոսկիներ ծախսուելու պէտք պիտի ըլլայ տակաւին :

Վիլհէլմի համար Թուրքիոյ բարեկամն է կըսուի . ի՞նչ պիտի պատահէր եթէ թշնամին եղած ըլլար :

Ինչ մեծագոյն շարիք կրնար հասցնել , քան անոր ծախել տայ , անօրուս ճանապարհորդութեան մը համար , դրամ մը այնքան հարկաւոր հանրային պէտքերը հողալու պետութեան մը որուն ելեմուտքը յոյժ ծանրաբեռուած է . դրամ մը ժողովուրդէն շուրթուած այնպիսի միջոցներով որոնց ո՛չ մէկ խիղճ չկրնար հանդուսել . դրամ մը վերջապէս , որ թէ իսլամ թէ քրիստոնեայ դըժբախտ ժողովուրդին արիւնն է :

Անգլիացի հրամաւոր Սէրտար Քիչնէր , Հէնրի-Մարդէնի հրացաններ գտած է Սուտանցիներուն քով :

Կը յիշուի թէ անգլիացի զօրավարներ նոյն զէնքերը Հնդկաստանի սահմանադիւրսի սպարտամբութեան ատեն ալ գտած էին :

Այ , հրացաններուն մէկ մասը սրբուած նշաններ և թիւեր կը կրէին , բայց երբեմն այդ նշան-

ները և թիւերը այնքան տեսանելի են որ ոչ ոք կը տարակուսի անոնց աղբիւրին վրայ . . . :

Արդէն , յոյժ մանրակրկիտ քննութիւն մը բացուած է այս մասին , և անգլիական կառավարութիւնը արդէն իր որոշ կարծիքը կազմած է այս կէտի մասին , ինչպէս կազմած էր նոյն նիւթին վրայ , հնդկական սահմանադիւրսի խնդրոյն ատեն :

Ուշագրութիւն գրաւած է սա դէպքը թէ դեսպանական պահակաւորները արդէն Սալը-Փաղար Թօփ-հանէի մօտ խարսխած են ձմեռը անցնելու , մինչ զեսպանները տակաւին իրենց ամառանոցները կը գտնուին :

ՃԱՄԲՈՐԴԻ ՅՈՒՇԱՅԵՏԻՅՑ

—)(—

Տփլիսում եմ , Ռուսահայութեան մտաւոր կէտրոնում : Անշուշտ ամեն մի հայի յայտնի է որ Տփլիսը բացի մտաւոր կէտրոն լինելուց և սիրտն է կովկասահայերիս : Եւ դիտէ՞ք որչափ եռանդով էր բաբախում այդ սիրտը . երբ ապրում էին Արժրուին , Բաֆֆին և ուրիշները . ամեն մի հասարակական ցաւ և ուրախութիւն որոտալի արձագանք էր գտնում Տփլիսում՝ շնորհիւ այդ հսկաների , զոնէ այն ժամանակվայ , տարածվում մտաբողջ կովկասի հայութեան մէջ , բոլոր այնտեղի հայ սրբերը թռնեցնում և հայութեան արիւնը աւելի արագ շարժում . . . :

Սակայն այս անգամ Տփլիսի հայութիւնը առաջվայ կեանքը չունի :

Հայրենակիցներս մի տեսակ մտամոլոր և շարած գրութեան մէջ են . . . :

Փողոցներում ամեն քայլափոխում , հանդիպում եւ մտախոհ հայկական տխուր և կարծես վհատված դէմքերի . խմբագիր , գրագէտ , ուսուցիչ , վաճառական մի խօսքով ամէն գասակարգի հայ նոյն իսկ դրսերից եկած գիւղացիները՝ տխուր են . թախիծով և դժգոհ իրանց վիճակից : Ինչ որ գաղտնի մեծ , կարծես բոլորովին անբուժելի ցաւ տանջում է բոլորին , կրծում է սրտերը :

Յաւ , որի մասին ոչ կարող են ազատ խօսել և ոչ էլ վերջնական կերպով դարմանող միջոցներ գտնել :

Ռուսահայերի հետ երեւում են և տաճկահայ գաղթականները . դրանց վշտակից դէմքերը արդէն աննկարագրելի են , միայն հիմայ մի տեսակ տատանող տրամադրութիւն է նկատվում մարած աչքերի մէջ :

Ռուսը սրանց հայրենիք է վերադարձնում . խեղճերը չը գիտեն ինչպէս որոշեն . նորից գնան անգուլթ տաճկի մօտ , թէ կրկին մնան կովկաս , սարոսափելի նեղութիւնների մէջ , ուր եթէ տաճկի սուրը և դանակը չէ հնձում

իրանց կեանքը , բայց անտանելի նեղութիւններն են հալում մաշում և կամացուկ , բոլորովին ուժաթափ անելով մեռցնում . . . Սակայն այդ էլ խնայվում է տաճկահային . ուսուր դրանից էլ է զրկում խեղճ հայ գաղթականին . թէեւ մի կողմից լաւ է անում , որովհետեւ դրանով տաճկահայը զուում է որ այնու ամենայնիւ լաւ է սեփական հողի վրա , իր տան մէջ տանջվել , քան թէ օտար երկրում , բոլորովին անարգված մուրացիկի վիճակում թափառել :

Երբ պատահած ուսահային ասում եմ թէ այսինչ մեծ փոփոխութիւն է տիրում Ռուսահայերի մէջ , այս ի՞նչ հանրային վիշտ է թագաւորում , պատասխանը լինում է . . . :

—Ինչպէս չը տխրել , ինչպէս չը յուսահատվել , ի՞նչի վրա ուրախանալ , ի՞նչով յուսադրվել . որ կողմդ նայում ես , լաց , արտասուք , սուգ , շիւան և աւերում , յափշտակութիւններ , տառապանք . և այդ բոլորը ամեն մի հայի համար , ամեն տեղ :

Տաճկաստանում կոտորում են , թալանում են , հալածում են . այս տեղ դպրոցները օրը ցերեկով խլում են , ինչ որ հայկական է ուղում են ոչնչացնել . գիւղացիներին ճնշում են հող չեն տալիս , իսկ նրա կողքում գտնված ազատ հողերի վրա բնակեցնում ուս ժողովրդի թափթփուկներին , բերելով Ռուսաստանի ամենահեռու անկիւններից :

Այդ դեռ բաւական չէ՝ արհեստական և ամենացած միջոցներով գրգռում են մեր հարեւան , դարերով մեզ հետ ապրող վրացիներին և թուրքերի շովինիստական զգացմունքները և մեզ ոխերիմ թշնամիներ դարձնում , որպէս զի կարողանան կովկասում ճնշել հայերին . թոյլ չը տալ բազմանալու , յառաջադիմելու . . . :

Գպրոցից զուրկ , հողից զուրկ , շարունակ հակառակ տարրերի , կառավարութեան ուղղակի և անուղղակի միջոցների դէմ կուող և շարունակ լարված հայը՝ ի՞նչ կարող է լինել այսուհետեւ : Իրանք այնպիսի պատճառներ են որ ա՛ւամայ ամենաքարացած , ամենաուսամուղ հային ստիպում են մտածել , տխրել . բայց ի՞նչ անել , ի՞նչ միջոցների դիմել դիմանալու , տակաւու և չը ոչընչանալու համար . . . որչափ մտածում ես , որչափ խելքիդ զօր սալիս՝ հնար չես գտնում . իսկ նրանք , որոնք կարող էին մի բան անել , իրանց ունեցած իրաւունքներով օգտակար լինել , այսինքն մեր հոգեւորները , ոչինչ չեն անում , ոչինչ չեն մտածում . կամ անտարբեր հանդիսականներ են մնում , կամ թէ իրանց անսակտ վարմունքներով աւելի կատղեցնում մեր ամենամեծ թշնամուն . ուսին . . . ՎԱՐԴՅ

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Մի անգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ՛ բոլորովին կամ մասամբ անվճար նամակներ չենք ընդունիր:

ՔՐՈՆՆԻԿ

Կ. Պոլսէն ուսական նովոստի լրագրին կը գրեն հետեւեալը:

Այստեղ գարձեալ դժգոհ են Ռուս կառավարութեան և կը վերագրեն անոր շատ էնթուրիներ փոքր Ասիայի մէջ: Մինչեւ իսկ կը հաւատեն, թէ այն ժամանակէն, երբ Անատոլի մէջ ըզգալի կերպով նուազեցաւ անգլիացի և ամերիկացի միսիօնարներու թիւը, ուսական գործակալները սկսեցին փորձել քիչ շատ որոշ մերձեւում առաջացնել ուղղափառութեան և փոքր Ասիայի հայ լուսաւորչականներու մէջ: Այդ ուս գործակալները, որ պէս թէ, ամէն կերպ կաշխատին հասկցնել հայերուն թէ անոնք բոլորովին պարագտեղը յոյս կը գնեն Անգլիոյ, Միացեալ Նահանգներու, Գերմանիոյ և նոյն իսկ Ռուսիայի վրայ, և թէ միայն Ռուսաստանը կարող է շերտնք հովանաւորել, ի հարկ է, այն պարագային միայն, եթէ անոնք մերժեն բողոքական վարդապետութիւնները և միսիօնարներու խորհուրդները որոնք իսկապէս ուրիշ բան չեն, եթէ ոչ եւրոպացի և ամերիկեան ելեւմտագէտներու գործակալներ: Այսպիսի զեկուցումներ Դրան շրջանին փոքր Ասիայի գայրապատներէն մէկ քանին:

Մտադրութիւն կայ այս օրերս Պաթմոմի մէջ հայոց եկեղեցական-ծխական դպրոց բանալ, կառավարական պահանջներուն հիման վրայ: Ռուսական թերթ մը կը շնորհաւորէ ուսումնարանի կարգադրիչները որ կը հպատակին կառավարութեան իրաւացի (•) պահանջներուն:

Կաթողիկոսը Ազուլեաց Մայր եկեղեցին այցելելուն առթիւ երկայն քարոզ մը իօսած է ժողովուրդին, առաջին պատուէր տալով աստուածապաշտութիւնը և բացատրելով զայն «գուրսի և ներսի» կողմէն: Զենքնկէցութեան խնդիրն ալ յիշելով, Ձարին հասցէին համակրական պարբերութիւններ արտաբերած է Կաթողիկոսը:

«Նոր նար» գործնական միջոց մը յղացած է անիշխանականութիւնը աշխարհիս երեսէն մաքրելու համար: Պարզապէս կառավարիչ հիմնել հիւանդանոց մը ուր փակուին բոլոր յայտնի անիշխանականները մինչեւ որ առողջանան: Հոսով գումարելի հակաանիշխանական համաժողով

վին մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրելու է «Նոր Դար»-ի այս հանձարեղ գիւտի վրայ:

Կրտսի թէ Սուլթանը դատական նախարարին հրամայել է պատրաստել ցանկը այն հայերուն, որոնց կարելի է ներում շնորհել: Ատկէց զատ ստորկանութեան նախարարը խոտացեր է զաւաններէն Պոլիս եկող հայ վաճառականներուն ամէն տեսակ գիւրութիւններ ընծայել: Այս լուրերը գերմանական աղբիւրէ ըլլալով շատ միջակ վստահութիւն մը միայն կրնան վայելել: մանաւանդ երբ այդ լուրերը Բաղէշի, Մուշի և Վանայ վերջին անկարգութիւններն ալ հերքելու կը հետամտին:

«Նարժում»-ի նախկին պատասխանատու Պ. Թաճմիզեանի դէմ բացուած դատը սկսաւ երկկ: Ամբաստանաւոր բացակայ էր: Երկու կողմէն փոխանորդներու հաւանութիւնով դատը յետաձգուեցաւ հոկտ. 27ին, միւս դատին հետ միասին քննուելու համար: Խմբագրութիւնն նստարութեան ներկայանալով կարելի եղած բոլոր պաշտօնական միջոցները կատարած է դատը իր վրայ փոխանցել տալու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ԿԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մամուլը գոհունակութեամբ կը գիտէ Փրանսայի և Իտալիոյ, Ռուսիոյ և Անգլիոյ կատարեալ համաձայնութիւնը կրտսական խնդրի մասին, և կը ծանուցանէ թէ տէրութեանց Պոլսոյ գեապանները մօտերս հրաման պիտի ստանան վերջնագիր մը մատուցանել Սուլթանին, պահանջելով որ կղզին տէրութեանց յանձնուի, թուրք զինուորները և պաշտօնէրութիւնը հեռանան, արդէն ծանօթ պայմաններով, այսինքն Սուլթանին գերիշխանութիւնը ծանցուի և օսմ. հպատակներուն կեանքը և ինչքերը երաշխաւորուին:

Վերջնագրոյն պայմանաժամը կըտուի թէ հոկտեմբերի 5ին կամ 10ին պիտի լրանայ: Եթէ Սուլթանը մերժէ, ահաբեկութիւնները հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնեն իրենց ծրագիրը գործադրել կարենալու համար:

«Թրիպոն» լրագիրը կը ծանուցանէ թէ Սուլթանը շատ տրամադիր կերեւայ պետութեանց պահանջքին համակրպելու:

Անցեալ Գշ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած է գեապանական առաջին ժողովը կրտսական խնդրին կարգադրութեան համար:

Լիվառիայէն կը ծանուցանեն թէ Ձարը արտաքին գործերու նախարարին հրամայել է աղբու կերպով ուժ ալ անգլիական պահանջումներուն կրտսէի մէջ: Ինքնակալը շատ տրամադիր կերեւայ գործերու, որպէս զի խըն-

գիրը որքան հնար է շուտ լուծուի:

Օտեսաէն Գիէվ շոգենաւով 707 ուսական զօրքեր, 25 սպայ և գնդապետ մը կրտսէ զրկուած են:

ՖՐԱՆՍԱ

Փոթորկալից նիստերէ ետքը նախարարական խորհուրդը վերջապէս վճռեց Տրէյֆիսի դատը վերաքննել տալ: Աքսորականին գործը իսկոյն վճռարեկ ատենին պիտի յղուի և այսպէսով խընդիրը դատական ճամբու մէջ մտած պիտի ըլլայ: Բարիզեան մամուլին մեծամասնութիւնը գոհունակութեամբ ընդունած է դաշլիճին այս կարեւոր որոշումը:

ԽՆՆԻՆ ԼՈՒՐԵՐ

Մատրիտէն կը ծանուցուի թէ հաշտութեան յանձնախմբին սպանիացի պատուիրակները քամբայ ելած են Բարիզ երթալու:

Սժանս Ռէօթէն կիմանայ թէ զօրավար Գիլլէր Ֆաշտա հասնելով, հոն դուրս է ֆրանսացի Մարշան հարիւրապետը: Անգլիացի հրամանատարը յայտնել է անոր թէ ինք հրաման ունի Ֆաշտան գրաւելու: Բայց Մարշան մերժել է ֆրանսական դրօշը վար առնել առանց կանխապէս այս մասին հրաման մը ստանալու իր կառավարութեանէն:

Այժմ Բարիզի մէջ այս խնդրին վրայ բանակցութիւններ կը կատարուին:

Զինատանի երիտասարդ կայսեր սպանութեան լուրը անհիմն է: Միայն թէ կառավարութեան մէջ մեծ վոփոխութիւններ եղած են, քանի մը մեծ պաշտօնատարներու պաշտօնակալութիւնով և Մայր-Վայսրուհիին նորէն պաշտօնի դուրս անցնելովը:

Պոլսէ կը հեռագրեն թէ ահա Ռուսի հրդեհ մը տեղի ունեցեր է Իզմիտի մէջ և ահագին վնասներ պատճառել է քաղաքին և շուկային:

Էլիզապէթ կայսրուհիին սպանութեան հետեւանքով, Ռուսաստանի մէջ բողոքութիւն լեհացի գործաւորներ ձերբակալուած են: Ասոնց քով գտնուած են Լոնտոն տպուած շատ մը վնասակար պրօշիւրներ:

«Տէյլի Մէյլի» կարծիքն այն է թէ Անգլիա պարտաւոր է հաստատամտութիւն ցուցնել Մայրազոյն Արեւելքի գործերուն մէջ:

Պէտք չէ, կրտսէ անգլիական թերթը, որ Ռուսիոյ թոյլ տանք վնասելու մեր շահերուն Զինու մէջ: Եթէ Ռուսիա յամառի, պիտի ստիպուի ընդունելու կռիւ մը, որ իրեն համար պարզապէս իրնաւատորմին փճացումը և Մայրազոյն Արեւելքի մէջ ունեցած ազգեցութեան շնչումը պիտի նշանակէ:

—(—)

Ա Ձ Դ

Կը խնդրուի այն ազգայիններէն որոնք կը ճանչնան խաս-գիւղցի քարակոփ Տ. Յովհաննէս Ռափայէլեանը և գիտեն անոր ուր տեղ գտնուիլը, որ հաճին խմբագրութեանս իմացնել:

ՎԱՐՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ) —(—) (Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսոյնք Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա Տ. Մուշեղ Արծրունիի քով:

Մտերս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Ռուսութեան գրչերը»:

ՊՕՐՍԱ

Վառնա 17 Սեպտեմբեր ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լիպրա 55—58, հէքթօր. 9.40—10.25 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօր. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42—50 հէքթօր. 5.20—5.80 ֆրանք

ԵՈՒՂԱՅ
Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր. 4—4.40 ֆրանք

ՏԱՐԸ
Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ
Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր. 100 օգգասը 15—21 ֆր. մալա կէօրէ: Առապա մուսուլէխի նաբօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր. Կիւնտէ 15—20 վազօն, 200—250 արապա պուղտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր:

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»-ի
Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւտում, հասցեւտում, նամակազուլս, հարսանեկան հրատիրագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւրներ:

Գիւնտէն յոյժ գլխաւորապէս Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ԿՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ս. ՍԱՊԱՆԳՅԻԼԵԱՆ
—(—)
ԵՐԿՈՒՅԵՐ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇԵԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԵՏՈՅ
—(—)
Գին 1 Ֆրանկ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թահիլ կէօրկայէօյի քանի խաւութիւն, և Ապտիւրբաւման մզկիթին դէմը հայկական գրատունը: Ա. Զարպանէլեանի քով:

Печатница «Взаимность» Варна.